

## Գյումրու հանրային խորհրդի 6 - րդ նիստ

Սղագրություն, սղագրող Լեւոն Բարսեղյան,  
Հնարավոր են տառասխալներ եւ շարահյուսական սխալներ

Առաջարկությունները խնդրում եմ ուղարկել [levon@asparez.am](mailto:levon@asparez.am) հասցեով

15:00 Բացման Խոսք, նախագահող Սերգեյ Նազարեթյան, «Կայունության եւ առաջընթաց» ՀԿ նախագահ, ՍՊԱԾ ՀԲ տնօրեն

15:10 1. Ռուս-վրացական կոնֆլիկտ, դրա ազդեցությունը Գյումրու վրա: (Կա՞ նման ազդեցություն, ԳՀԽ հայտարարություն ընդունե՞լ այս կապակցությամբ, թե՞ ոչ):- Չեկուցող Արտուշ Մկրտչյան, «Ոչ ավանդական եղանակներով կոնֆլիկտների լուծմանը կովկասյան կենտրոն» ՀԿ:

Ա.Մկրտչյան. «Գյումրուն այլեւս ոչինչ չի փրկի» սա կատակ էր: Հիմնական կարծիքը արեւմուտքից՝ նեգատիվ է: Գլոբալ, երկու խոշոր դերակատարների միջեւ Եվրոպան այսպես էլ չկարողացավ հանդես գալ որպես միջնորդ: Հիմնական խաղադաշտը մնաց ԱՄՆ-ին եւ Ռուսաստանին: Ռուսաստանը կարողացավ դեմ կանգնել ՆԱՏՕ-ի առաջխաղացման եւ սահմանափակել առաջխաղացումը այս տարածաշրջանում: Երկրորդ կարծիքն այն է, որ Ռուսաստանը փորձում է վերականգնել Սովետական միությունը, Ռուսաստանը «ղազըծնեզը» ու բերում է իր լծի տակ: Ցավոք Եվրոպան չկարողացավ որպես միջնորդ հանդես գալ: Կովկասը Ռուսաստանի եւ Սահակաշվիլու թեթեւ ձեռքով անցավ Ռուսաստանի ազդեցության տակ, այսպիսի կարծիք կա փորձագետների շրջանում: Հայաստանում ինֆրաստրուկտուրաները վաճառելով ուր կարելի է հասնել ... միակ ըմբոստը տարածաշրջանում Վրաստանն էր, առաջիկա երեք ամիսների ընթացքում այստեղ նախագահի հարց կարող է դրվել: Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ այս կոնֆլիկտը Հայաստանի վրա: Փորձագետների մի մասը ասում է, թե կարիք չկա Ղարաբաղի հարցը խառնել այս կոնֆլիկտին, մյուս մասն ասում է, թե հարկավոր է խառնել: Նախ Կոսովոն, ապա Աբխազիան եւ Հարավային Օսեթիան, այս տրամաբանության մեջ ԼՂՀ-ն էլ է մտնում: ԼՂՀ կոնֆլիկտը նման չլինելով այս կոնֆլիկտներին, առանձին եւ բարձր դիրք գրավեց եւ եզակի է: Փորձագետների կարծիքով, այս եղանակով ԼՂՀ-ն չի կարող անկախություն ստանալ: Հյուսիսային Կիպրոսի անկախությունը միայն Թուրքիան է ճանաչել: Փորձագետների կարծիքով ավելի լավ բնականոն ընթացքով ընթանան անկախությունների ճանաչումները, քան թե բեւեռացվածության մթնոլորտում: Ադրբեջանին ավելի լուռ, ավելի գլխահակ հնարավոր չէր տեսնել: Ալիևի կողմից դադարեցվել են ռազմաշունչ հայտարարությունները: Այժմ բոլոր տեսակի կոչերը եւ անգամ գնահատականները Ադրբեջանը բացահայտ չի ասում: Հայաստանն այժմ նույնիսկ ավելի ակտիվ է քան Ադրբեջանը: Գյումրու հետ կապված բենզինի եւ հացահատիկի պրոբլեմներ են զգացվում: Իրադրություն ավելի վտանգավոր է Ջավախք եւ Մարնեուլիի մասով: Վրացիները բավականաչափ մտահոգված են: Ռուսները, չնայած հայերի բարեկամ են, բայց վտանգավոր եղավ Վրաստանից ռուսական բազաների դուրսբերումը: Որոշ ջավախահայեր թողեցին եւ դուրս եկան այնտեղից, իսկ մեր ճանապարհները անցնում են Ջավախքով: Բենզինի եւ հացահատիկի խնդիրը նույնպես կա: Վրաստանը, չգիտես ինչու թույլ չտվեց օգտագործել պայթեցված ճանապարհի շրջանցիկ ճանապարհները:

Յ.Մելքոնյան.- Վրաստանի վրայով ինչու են խոչընդոտում հայկական օդանավերի թռիչքին:

Ա.Սկրտչյան.-Ռմբակոծել էին Թբիլիսիի ռադամային կայանը, եւ Վրաստանը հայտարարել է, որ չի սպասարկելու Ռուսական ավիաուղիների չվերթերը: Փոթի եւ Բաթումի նավահանգիստները Յայաստանի համար կարելուր նշանակություն ունեն: Սրանք աշխարհաքաղաքական նշանակություն ունեն: Փոթիի բեռները վտանգված են ռուսական եւ ամերիկյան նավերի ազդեցությունից:

Արթուր Գեւորգյան-Իրանի ճանապարհը, որպես այլընտրանք ?

Ա.Սկրտչյան-հասարակական գործիչները կոչով հանդես եկան Գյումրի-Կարս երկաթուղին բացելու օգտին, ապա սկսվեցին նորոգման աշխատանքները, հնարավոր է, որ բացվի, բայց դեռ պարզ չէ: Ա.Գյուլը դեռ չի պատասխանել՝ կգա Յայաստան, թե ոչ: Նրա անվտանգության ծառայությունից այստեղ են, արդեն նախապատրաստական աշխատանքներ են տարվում:

Կարեն Պետրոսյան-Յայաստանի դիրքորոշումը ո՞րն է, Յվ.Օսիսայի եւ Աբխազիայի անկախության ճանաչման մասին:

Ա.Սկրտչյան-Յայաստանի պոզիցիան պոզիցիա չունենալն է ...: Մեր երկիրը դիրքորոշում ունի բայց հայտարարություն անել չի կարող:

Տիգրան Բեգլարյան-Սա մոտեցում չէ. Կոստվոյի դեպքում Ռուսաստանը թույլ չի տալիս արտահայտվել, իսկ Վրաստանի մասին էլ՝ Յայաստանի ձեռնտու վչէ արտահայտվել...

Աշոտ Միրզոյան-Ո՞րն է մեր երկրի իշխանությունների կոնցեպցիան մեր երկրի կենսաապահովման հարցում, ի՞նչ է արվում:

Ա.Սկրտչյան-Վառելիքի եւ ցորենի տեղափոխման համար որոշ աշխատանքներ տարվեցին: Բայց ... ըստ փորձագետների, Յայաստանը ռազմավարական պաշարներ չունի: Երեւանում բենզինը 1000 դրամ է եղել:

Լիլիթ եւ Ադելյան եւ այլք-Իրականում այդպես չէ, պատրեր կան:

Ա.Սկրտչյան-Բայց բեզինի դեֆիցիտ կա, այդ աժիտաժն արդեն ռազմավարական պաշարների պակասի նշան են:

Սահակ Շիրոյան-Եթե Աբդուլա Գյուլը գա, որքանո՞վ եք ճիշտ համարում հայաստանցիների ակցիաները, ասեսք Դինկի հիշատակին ...

Ա.Սկրտչյան-Աշխարհը Էթնիկական կոնֆլիկտների ժամանակ կատարված սպանությունների օրինակներ ունի, ՅՅ նախագահի վերջին 100-200 օրերի ընթացքում կատարած ամենադրական եւ ազդեցիկ քայլը Աբդուլա Գյուլին ֆուտբոլ դիտելու հրավիրելն էր: Այսօր Ջավախքում բազմաթիվ պրովոկացիաներ են տեղի ունենում, գիտեք ովքեր են կազմակերպողները: Նախաձեռնվում են մշակութային-ազգային ինքնավարությունների ստանալու կամ տրամադրելու հարցերը: Դա սարսափելի է: Դա ձեռնտու է երրորդ երկրներին: Սարսափելի բան տեղի կունենա Յայաստանի հետ այդ դեպքում: Մնալու է միայն Իրանի ճանապարհը:

Գեւորգ Պետրոսյան.-Ադրբեջանը իր ընդհատակյա գործունեության մեջ շատ ակտիվ է, ինտերնետ եւ այլն: Յայաստան-Վրաստան հարաբերությունների փչացման համար որոշակի աշխատանք է տանում:

Ա.Մկրտչյան-Եռակի ավելի շատ թվով դիտորդներ են լինելու Ադրբեջանի նախագահական ընտրություններում, քան Հայաստանում էին, հիմա Ադրբեջան են գալիս Հայաստանի դասերով:

Ս.Նազարթյան-Ռազմանավերի գալու իմաստը ո՞րն է: Սպառնալի՞ք, թե՞ հումանիտար օգնություն:

Ա.Մկրտչյան-Եւ այն, եւ այն:

Հենրիկ Գելորգյան-Եթե երրորդ համաշխարհային լինի, ինչքա՞ն կտեւի այն:

Ա.Մկրտչյան-Շատ կարճ:

Լիլիթ Աղեկյան-ԼՂՀ-ն ճանաչեց Հվ.Օսիայի եւ Աբխազիայի անկախությունը:

Ա.Մկրտչյան-Պարտավոր եր...:

Ս.Նազարթյան-Հայաստան մտնող ապարանքների 70 տոկոսը գալիս է Վրաստանով: Մնացածը գալիս է՝ Իրանով: Իրանի հետ երկաթուղային կապ չկա: Եթե խոսում են երկաթգիծ կառուցելու մասին ... ուրեմն ադրբեջանական Ջուլֆայից Մեդրի պիտի երկաթգիծ սարքվի, ապա Չանգեզուրի լեռներով պիտի ճանապարհ սարքվի, ինչը բավականաչափ բարդ է:

Ա.Գելորգյան-Միայն խաղաղ միջոցներով խնդրի լուծման եղանակներ կա՞ն: Կարելի՞է համաձայնության հասնել, որ խնդիրները պայմանավորվում են կարգավորել միայն խաղաղ եղանակներով:

Ա.Մկրտչյան-Տարածք կորցրած երկրների դեպքում դա գրեթե անհնար է: Ադրբեջանի ռազմաշունչ հայտարարություններն այսօր ճնշման տակ են: Իրենց հասկացրին, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը կարող շահագործվել միայն խաղաղության պայմաններում: Կար գաղափար Նախիջեւանի գիծը աշխատեցնելու մասին, կամ Ղազախի գիծը: Դա կարող է ռեալ դառնալ:

Լ.Բարսեղյան-Պատերազմով չի կարելի ուրախանալ, անցած 20 օրերին ինձ հանդիպած 100 հոգուց 95-ը ուղղակի շողում է երջանկությունից, որ պատերազմ է, տեսեք-տեսեք-շուտով սվաններն ու աջարներն էլ ոտքի կելնեն, ամոթալի բան է, Մարկեսն ասում էր՝ պատերազմն սկսելն ավելի հեշտ է քան այն ավարտելը: Օգոստոսի 10-ին արդեն վրաց մաքսավորները մեզ խեղում էին, թե ձեր օդանավակայաններից են ռուսական օդանավերը թռել ու ռմբակոծել Վրաստանը: Դե արի այդ մարդկանց բան բացատրի ... , կարող է թռել են, կարող է՝ չեն թռել: Վաղն էլ կասեն բոլոր տրանզիտների գները բազմապատկվում են: Դե ուրախացողները թող ուրախանան այս պատերազմով ...

15:40

2. ԳՀԽ Բնապահպանական հանձնախմբի (բնապահպանական կոալիցիա) առաջարկությունները Գյումրու տեղական ինքնակառավարման մարմիններին: Ներկայացնում է Գ.Պետրոսյանը (ՕՐՀՈՒՄ-ի կենտրոն, «Բիոսֆիա» ՀԿ):

Գելորգ Պետրոսյան-Ներկայացնում է բնապահպանական կոալիցիայի առաջարկները: Տեսեք ստորեւ:

“Գյումրու շրջակա միջավայրի պահպանության  
հասարակական կոալիցիա”

Գյումրու քաղաքապետ պրն. Վ.Ղուկասյանին

Գյումրու Ավագանու անդամներ՝

Գագիկ Աղաջանին, Արսեն Աղայանին, Գեորգ Առաքելյանին, Արամայիս Բաղդասարյանին, Վահան Գասպարյանին, Արամ Խաչատրյանին, Հրայր Խաչատրյանին, Անդրանիկ Կարապետյանին, Գեորգի Ղազարյանին, Հրաչ Մելքոնյանին, Կարապետ Ներսիսյանին, Զուբար Զարգարյանին, Հենրիկ Պողոսյանին և Արտաշես Զանոյանին

ԴԻՄՈՒՄ

Մեծարգո պարոնայք,

“Գյումրու շրջակա միջավայրի պահպանության հասարակական Կոալիցիայի” անդամներս, ելնելով Գյումրի համայնքի արդյունավետ զարգացման մեր շահագրգռությունից Ձեզ ենք ներկայացնում Գյումրու ավագանու որոշումների մի քանի նախագծեր՝ համապատասխան հիմնավորումներով:

Խնդրում ենք ուսումնասիրել դրանք, ընդգրկել ավագանու առաջիկա նիստի օրակարգում եւ հաստատել: Պատրաստ ենք Ձեզ ներկայացնել այս առաջարկությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, վերլուծություններ եւ հիմնավորումներ, երբ կկամենաք՝ ավագանու առաջիկա նիստի, կամ հնարավոր հանրային լսման, կամ քննարկման, կամ խորհրդակցության ժամանակ:

Ստորև ներկայացվում են Գյումրու ավագանու որոշումների նախագծերը, իրենց հիմնավորումներով:

Կանխավ շնորհակալություն,

«Գյումրու շրջակա միջավայրի պահպանության հասարակական Կոալիցիայի»  
նախագծեռնող խումբ

26-ը օգոստոսի, 2008թ. ք. Գյումրի

Նախագիծ – 1

Գյումրու ավագանու որոշման

Նախագծի առաջարկության հեղինակ՝

“Գյումրու շրջակա միջավայրի պահպանության հասարակական Կոալիցիա”

Առաջարկի հիմնավորումը

Այսօր Գյումրի քաղաքն ունի Գլխավոր հատակագիծ և պատմական կենտրոնի գոտիավորման նախագիծ, բայց չունի ողջ տարածքի ֆունկցիոնալ գոտիավորման նախագծեր, իսկ ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.1 հոդվածի դրույթների համաձայն՝ գոտիավորմամբ սահմանված պահանջներին հակասող քաղաքա-շինական գործունեությունն արգելվում է: Գյումրիում տարածքների ֆունկցիոնալ գոտիավորման նախագծերի բացակայության պայմաններում այս հարցը մնում է բաց:

Գյումրի քաղաքի ճարտարապետական ու պատմամշակութային միջավայրի պահպանման ու զարգացման, ինչպես նաև քաղաքում շրջակա միջավայրի որակի բարելավման նպատակով առաջնահերթային խնդիր է Գյումրի քաղաքի ողջ տարածքի գոտիավորման նախագծեր ունենալու անհրաժեշտությունը, որը պատշաճ կերպով կկարգավորի

քաղաքաշինական, սոցիալական, տնտեսական և բնապահպանական ոլորտների խաչմերուկում գտնվող շատ հիմնահարցեր:

Քաղաքի ողջ տարածքի ֆունկցիոնալ գոտիավորման նախագծեր ունենալու անհրաժեշտությունը լրացուցիչ հիմնավորման կարիք չունի, քանի որ, ՀՀ օրենսդրության անվերապահ պահանջն է՝:

Խնդրի կարգավորման համար անհրաժեշտ որոշման նախագիծը.

«Գյումրու ավագանին, հաշվի առնելով ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի պահանջները եւ դրանցից բխող այն հանգամանքը, որ Գյումրի քաղաքին անհրաժեշտ են ամբողջ տարածքի գոտիավորման նախագծեր,

ՈՐՈՇՈՒՄ է, այդ նպատակով համայնքի 2009թ. բյուջեում նախատեսել 80 մլն դրամ գումար<sup>2</sup>: Գոտիավորման նախագծերը պատվիրել առնվազն երկու տարբեր կապալառուների: Յուրաքանչյուր անգամ կապալառուների ընտրության համար, ըստ ՀՀ համապատասխան օրենսդրության, անցկացնել բաց մրցույթ:

Նախագիծ – 2

Գյումրու ավագանու որոշման

Նախագծի առաջարկության հեղինակ՝

«Գյումրու շրջակա միջավայրի պահպանության հասարակական Կոալիցիա»

Առաջարկի հիմնավորումը

Քաղաքակիրթ աշխարհում շրջակա միջավայրի վերաբերյալ պետական կամ տեղական իշխանությունների մակարդակներում որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցությունը հանդիսանում է այն հիմնական գործոններից մեկը, որը նպաստում է հասարակության իրավասությունների շրջանակների ընդլայնմանը, համագործակցության զգացողության ձևավորմանը և փոխվստահության աճին: Հանրային մասնակցությունը թույլ է տալիս հնարավորինս նվազեցնել այն ռիսկերը, որոնք որպես կանոն առկա են շրջակա միջավայրի պահպանության եւ բարենպաստ զարգացման գործընթացներում:

Երկու տարի է, ինչ Գյումրու քաղաքային բյուջեի Կոմունալ տնտեսություն բաժնի թիվ 5600 տողով, 16 մլն դրամ է հատկացվում քաղաքի կանաչապատման և ՀԿ-ների հետ համատեղ բակերի կառուցապատման աշխատանքներ իրականացնելու համար: Դա նախատեսվել էր Գյումրի քաղաքի 2007թ. և 2008թ. բյուջեներով, որոնք հաստատվել են ավագանու որոշումներով և տեղական մակարդակում իրականացնելու համար պարտադիր են: Չնայած ավագանու որոշմամբ հաստատված այս դրույթներին, Գյումրու ՀԿ-ներն այդպես էլ չեն կարողանում ներգրավվել դրանց իրականացման աշխատանքներին, (կամ ներգրավվում են, բայց հանրությունը եւ մենք տեղյակ չենք) քանի որ ՏԻՄ-ի կողմից հասարակական մասնակցության համար ստեղծված չեն համապատասխան մեխանիզմներ: Ընդհանրապես յուրաքանչյուր որոշմանը պետք է հաջորդի այն հարցը, թե ինչպես պետք է կյանքի կոչվի այն: Այս դեպքում, կամ Գյումրու ավագանու, կամ Գյումրու քաղաքային գործադիր իշխանության կողմից կողմից պետք է կոնկրետ սահմանվեր, թե կանաչապատման և բակերի կառուցապատման աշխատանքները ինչպես պետք է իրականացվեն ՀԿ-ների հետ համատեղ: Կամ պետք է հայտարարվեր բաց մրցույթ, որին հրավիրվեին մասնակցելու հասարակական կազմակերպությունները, կամ որոշվեր, որ, ենթադրենք, աշխատանքի X%-ն իրականացվում է հասարակական կազմակերպությունների

<sup>1</sup> ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենք, հոդված 17. Սույն հոդվածի հինգերորդ մասի «ա» - «դ» կետերով սահմանված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի և 13-րդ մասով սահմանված գոտիավորման փաստաթղթերի մշակումը պարտադիր է:

<sup>2</sup> Գումարի հաշվարկը կատարված է «Հայնախագիծ» ՓԲԸ -ի մասնագետների կողմից 14.08.2008թ. և իր մեջ ներառում է նաև ԱԱՀ-ն:

միջոցով, կամ որևէ այլ ձև մտածվել: Ցավոք այսօր ՏԻՄ-ի կողմից դա չի արվել և մենք առաջարկում ենք ընդունել խնդրի կարգավորման բաց մրցույթի տարբերակը:

Կարելի է օգտվել Վանաձորի քաղաքապետարանի փորձից, այնտեղ 2007թ. տեղական բյուջեից դրամաշնորհներ է տվել երեք հասարակական կազմակերպությունների և համապատասխան աշխատանք ու հաշվետվություններ ստացել: Այնտեղ հստակ մշակված կան հասարակական մասնակցության ընթացակարգեր, որոնք կարելի է վերցնել, համապատասխանեցնել Գյումրու պայմաններին և կիրառել:

Խնդրի կարգավորման համար անհրաժեշտ որոշման նախագիծը.

«Գյումրի քաղաքի հասարակական կազմակերպություններին Գյումրու համայնքային բյուջեի «Կոմունալ տնտեսություն» բաժնի «Կանաչապատման և ՀԿ-ների հետ համատեղ բակերի կառուցապատման աշխատանքների համար» տողով նախատեսված գործունեության իրականացման մեջ ներգրավելու համար հայտարարել դրամաշնորհային բաց մրցույթներ: Մրցութային գործընթացն իրականացնել հետևյալ սկզբունքներով.

ա. Մրցութային և ծրագրային գործընթացները, այդ թվում մրցույթի մասին հայտարարությունը, մրցութային պայմանները, այդ հայտերի ընդունումը, հայտերի քննարկումը, հաղթող կազմակերպությունների ընտրությունը, պայմանագրերի կնքումը, կատարված աշխատանքների մասին ծրագրային և ֆինանսական հաշվետվությունների ընդունումը, ծրագրի իրականացման մասին եզրափակիչ ակտերի ստորագրումները, իրականացնել պատշաճ հրապարակայնության պայմաններում:

բ. Մրցութային հանձնաժողովներում խորհրդակցական ձայնով ընդգրկել 3-5 հոգի՝ իշխանություն և գործարարություն չներկայացնող ոլորտներից, պայմանով, որ նրանց ներկայացրած կամ անդամակցած կամ հիմնադրած կազմակերպությունները այդ մրցույթների հայտատուներ չլինեն. անհատ մասնագետներ, ՀԿ-ների, հիմնադրամների, միությունների, կուսակցությունների, կրոնական, միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նրանց մասնակցության համար՝ պատշաճ իրազեկել հանրությանը:

գ. Հիշյալ բյուջետային հոդվածի իրացման և աշխատանքների կատարման համար տարեկան ընտրել առնվազն 5 դրամաշնորհառու կազմակերպություն:

դ. Մրցութային պայմաններն ու գնահատման համակարգը կազմել այնպես, որ մրցույթի մասնակցության հայտերն ունենան առնվազն 2՝ ծրագրային և ֆինանսական մասեր: Մրցույթի ծրագրային փաթեթի գնահատման կշիռը սահմանել 60 (մինչև 70) տոկոս, իսկ ֆինանսական փաթեթի գնահատման կշիռը՝ 40 (առնվազն 30) տոկոս, եթե այդ պահին այլ բան չի նախատեսվում ՀՀ գործող օրենսդրությամբ:

ե. Պատվիրման պայմանագիրը կազմել աշխատանքի դիմաց հատկացվող դրամաշնորհի բովանդակությամբ (ՀՀ գործող օրենսդրությամբ ՀԿ-ները կապալառու չեն կարող լինել և վճարովի պատվերներ չեն կարող իրականացնել):

զ. Պայմանագրում նախատեսել պայմանագրի պայմանների երկուստեք խախտման տուգանային սանկցիաներ, ընդհուպ՝ մինչև դրամաշնորհային գումարի վերադարձն ու շրջակա միջավայրին հասցված հնարավոր վնասների փոխհատուցումը:

Նախագիծ – 3

Գյումրու ավագանու որոշման

Նախագծի առաջարկության հեղինակ՝

“Գյումրու շրջակա միջավայրի պահպանության հասարակական Կոալիցիա”

Առաջարկի հիմնավորումը

«Շրջակա միջավայրի տեղական բնապահպանական գործողությունների ծրագիրը» համայնքի բնապահպանական հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողությունների պլանավորման և իրականացման ամբողջական համակարգ է, որը պահանջում է մասնակցային մոտեցում և սերտ համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների, գործարար ոլորտի և համայնքի բնակիչների միջև:

Սա ՀՀ շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագրի հետագա զարգացումն է:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների համար Համազգային ծրագրի պարտադիր լինելու վերաբերյալ որոշումն ընդունվել է 1993թ. Լյուցերնում տեղի ունեցած «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» Երկրորդ կոնֆերանսի ժամանակ, որին մասնակցել է նաև Հայաստանը:

Տեղական բնապահպանական գործողությունների ծրագիրը նպատակ ունի համատեղ ուժերով հասնել բնապահպանական խնդիրների լուծման, ինչը կնվազեցնի մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության վտանգը, կբարելավի համայնքի անդամների կյանքի որակը և կբարձրացնի նրանց կենսամակարդակը:

Տեղական բնապահպանական գործողությունների ծրագրի ստեղծման պրոցեսն արդեն անցել է իրավիճակի գնահատման, համայնքի համար առավել հրատապ բնապահպանական հիմնախնդիրների վեր հանման, դրանք ծնող գործոնների, ազդեցության աղբյուրների, օբյեկտների ու մասշտաբների բացահայտման փուլերը:

Կատարվել է անհրաժեշտ գործողությունների նկարագրությունը, որն էլ կազմում է մեր շրջակա միջավայրի տեղական բնապահպանական գործողությունների ծրագրի հիմքը:

«Շրջակա միջավայրի տեղական բնապահպանական գործողությունների ծրագիրը» իրավական փաստաթուղթ չէ, սակայն պլանի գործառնությունն ու արդյունավետությունն առավելագույնի հասցնելու համար չափազանց կարևոր է այն վավերացնել տեղական մակարդակով:

Սա մի փաստաթուղթ է, որը մշակվել է Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների մասնագետների, պետական բնապահպանական կազմակերպությունների և համայնքի անդամների ուժերով, ու պետք է ապահովի շրջակա միջավայրի պահպանությունը՝ համահունչ լինելով համայնքի զարգացման ծրագրերին:

Մեծ է հավանականությունը, որ նշված գործընթացում ակտիվ մասնակցություն ունեցող, տեղեկացված քաղաքացիները և տեղական ինքնակառավարման մարմինները կնպաստեն շրջակա միջավայրի ոլորտում կոնկրետ ծրագրերի իրագործմանը:

ՏԻՄ-ը ընդունում եւ վավերացնում է «Շրջակա միջավայրի տեղական բնապահպանական գործողությունների ծրագիրը» որպես տեղական բնապահպանական քաղաքականության հիմք և ապահովում ծրագրի իրականացումը՝ իրավական և ինստիտուցիոնալ ճշգրտումների ու կապիտալ ներդրումների միջոցով:

«Շրջակա միջավայրի տեղական բնապահպանական գործողությունների ծրագրի» առկայության հիմնական արդյունքը կլինի շրջակա միջավայրի բարելավված կառավարումը:

Խնդրի կարգավորման համար անհրաժեշտ որոշման նախագիծը.

Հաշվի առնելով «Շրջակա միջավայրի տեղական բնապահպանական գործողությունների ծրագրի» կարելությունը Գյումրի համայնքի հետագա արդյունավետ զարգացման

գործում Գյումրու ավագանին հաստատում է «Գյումրի քաղաքի շրջակա միջավայրի տեղական գործողությունների ծրագիրը»:

Լիլիթ Աղեկյան-Այդ առաջարկները քաղաքապետի հետ համատեղ քննարկումների արդյունքում են եղել:

Գեւորգ Պետրոսյան-Այո, նաեւ:

Ս.Նազարեթյան-Մինչեւ հիմա եղել է ԶԿ-ներին տրված դրամաշնորհի թե՞ ոչ:

Լիլիթ Աղեկյան-Ինչքան ինձ հայտնի է՝ ոչ:

16:00

3. ՏԻՄ առաջիկա ընտրություններ, հոկտեմբերի 26, Գյումրու հանրային խորհրդի մասնակցության հեռանկարները. մասնակցե՞լ, թե՞ ոչ, եթե այո՝ ինչպե՞ս, ի՞նչ կարգավիճակով, պասիվ ակտիվ, եւ այլն: Լ.Բարսեղյան, ԺԱԱ

Կարծում եմ առաջիկա՝ հոկտեմբերի 26-ի ՏԻՄ ընտրություններում Գյումրու Զանրային խորհուրդը անելիքներ ունի: Լ Մենք չենք կարող այեւսա հանդուրժել, նման ավագանի մեր քաղաքում: Առաժիկա ընտրություններում մեր առաջին խնդիրը ընտրական խախտումների եւ ընտրակեղծիքների մակարդակի հնարավոր նվազեցումն է: ԳԶԽ-ն պարտավոր է նախապատրաստվել եւ հանրային այնպիսի տրամադրություններ ու հսկողական համակարգ ստեղծել, որ ընտրակեղծիքի, ընտրակաշառքի, ծեծի, տեղամասերում տեղի ունեցող այլանդակությունները՝ այդ թվում՝ մեկի քվեները մյուսի օգտին հաշվելու դեպքերը հասնեն նվազագույնի, կամ չլինեն: Մյուս դերակատարությունը, որ տեսնում եմ, այն է, որ ԳԶԽ-ն կարող է իր թեկնածուներն ունենա, եթե կամենա: Կարող է չունենալ, եւ երբ առաջադրումներն ու թեկնածուների գրանցումներն ավարտվեն, լսումներ հրավիրի եւ լսի բոլոր թեկնածուներին, եւ ինքն ու հանրությունը կողմնորոշվեն, թե ովքեր կարող են առավելի պատասխանատու ավագանու անդամներ լինել:

Կարեն Պետրոսյան-Ինչո՞ւ Լեւոն Բարսեղյանը չի առաջադրվելու որպես քաղաքապետ,

Լեւոն Բարսեղյան-Մի շարք պատճառներով. նախ ցանկություն չունեմ իմ գործը քաղաքապետի աշխատանքի հետ փոխել, ես այժմ շատ անելիքներ ունեմ: Բացի այդ էլ իրավունք չունեմ, օրենքով պիտի առնվազն վերջին մեկ տարում բնակված լինեմ Գյումրիում եւ վերջին 2 տարվա հաշվառում ունենամ, գիտեք որ միշտ էլ Գյումրիում եմ բնակվել, բայց հաշվառումս 1,5 տարվա է, ես էլ Ռոբերտ Քոչարյանը չեմ, որ վազեմ կեղծ տեղեկանք բերեմ ու առաջադրվեմ:

Հրաչ Մելքոնյան-Ավելի ճիշտ է 2-3 հոգու առաջարկենք ԳԶԽ-ի կողմից, քան թե տասը հոգու, ձայները փոշիանալու են ...:

Կարեն Պետրոսյան-Հարկավոր է թեկնածուներին դիվերսիֆիկացնել: Կարելու է, որ մեր թեկնածուները հաշվետու լինեն հանրության առաջ: Գյումրու հանրային խորհրդի անունից հանդես գալու խնդիրները հարկավոր է կարգավորել: Ոլորտային թեկնածուների լինելը ճիշտ է եւ արդարացված:

Ս.Նազարեթյան-Մեխանիզմներին մի անցեք դեռ, բավականին բարդ բան է թեկնածուներին դիվերսիֆիկացնելը, յուրաքանչյուրը մեկ ձայն ունի եւ հիմա երբ ասում եք, որ Վահան Թումասյանն ու Հրաչ Մելքոնյանը դնելու են իրենց թեկնածությունները ես արդեն երկընտրանքի մեջ եմ ընկնում:

Արթուր Գեւորգյան-ԳԶԽ-ն պիտի փորձի ձեռնպահ լինել անձնավորումներից: Ո՞րն է քաղաքապետի կամ ավագանու նախընտրելի թեկնածուն, ինչպիսի՞ն



պիտի լինեն նրանք, որո՞նք են այդ հատկանիշները ... ա՛յս գաղափարները պիտի քարոզվեն: Սա առաջին անգամն է, որ ԳՀԽ-ն ընտրությունները նվազագույն կեղծիքներով անցկացնելու մտահոգություն ունի:

Վ.Թումասյան-ՏԻՄ-ում ինքնաառաջադրում է եւ ոչ թե առաջադրում, սա հաշվի առեք, ԳՀԽ-ն չի կարող մեկի թեկնածությունը առաջադրել, կարող է, լավագույն դեպքում՝ պաշտպանել:

Տիգրան Բեգլարյան-Եթե մարդը չհասունացավ քաղաքապետի եւ ավագանու անդամ, արհեստականորեն չի լինի: Ճիշտ կլինի ապաքաղաքականացնել ՏԻՄ ընտրությունները:

Վ.Թումասյան-...ոչ թե ապաքաղաքականացնել, այլ ավելի ճիշտ է, ապակուսակցականացնել:

Ղարիբ Հարությունյան-Մենք մասնակցության կարգավիճակն ենք քննարկում: Մարդ ենք ուղարկելու՞:

Լ.Բարսեղյան-Ոչ, գերագույն է թիրախը որակյալ ավագանի ենք ուզում ունենալ: Ճանապարհի հարց է: Եթե օրինակ, պարզվի որ դրա համար հարկավոր է Ձեռմուկի արտադրամաս դնել, որեւմն պիտի ամեն ինչ անենք այդ արտադրամասը ստեղծելու համար: Սա հիպոթեթիկ օրինակ է: Իմ առաջարկներից առաջինն այն է, որ պիտի օրակյալ ընտրություններ կազմակերպել, նվազագույնի հասցնել ընտրակեղծիքներն ու մնացած բոլոր ընտրախախտումները եւ քարոզչության եւ քվեարկության փուլերում: Հարկավոր է լսումներ կազմակերպել, մեկ առ մեկ լսել ավագանու բոլոր թեկնածուներին, բոլոր այն հնարավոր հարցերի շուրջ, որ ունեցել ենք ու կունենանք մեր քաղաքում ապագայում: Օրինակ պիտի մեկ առ մեկ հարցվի բոլոր թեկնածուներին՝ Կենտրոնական հրապարակից եղելնի կտրելու որոշմանը կողմ քվեարկելու՞ եք, թե՞ չեք քվեարկելու, այդպես բոլոր այն խայտառակ քվեարկությունների մասին է հարցվելու: Մեզ հետ ՉԼՄ-ների միջոցով ամբողջ հանրությունն է իմանալու, թե ինչպես են մտածում թեկնածուները եւ ըստ այդմ կողմորոշվելու է:

Արթուր Գեւորգյան.-Ճիշտ կլինի, որ ավագանում մեր կամեցած թեկնածուների կանոնակարգ կամ կողքես ունենանք, եւ առաջնորդվենք դրանով:

Կարեն Պետրոսյան-Առաջարկում եմ անցած կամ գործող ավագանու անդամների նախընտրական խոստումների արձանագրություններն ու տեսագրությունները եւ հաշիվ պահանջենք նրանցից:

Կարապետ Ներսիսյան-Նայենք թեկնածուների անցյալը, կենսագրությունը, ապա կողմնորոշվենք: Մենք պետք է հետաքրքրվենք թեկնածուների անցած կյանքով:

Տիգրան Բեգլարյան-Ավագանու աշխատանքը կախված է քաղաքապետի աշխատանքի սկզբունքներից: Ովքե՞ր են քաղաքապետի հնարավոր թեկնածուները:

Լեւոն Բարսեղյան.-Այսպես, առայժմ հայտարարել են իրենց մտադրությունների մասին.

Վարդան Ղուկասյան, գործող քաղաքապետ, ՀՀԿ

Մարտուն Գրիգորյան, ՀՀ ԱԺ պատգամավոր,

Կարապետ Ներսիսյան, Գյումրու ավագանու անդամ, թիվ 17 դպրոցի տնօրեն

Վարդեան Գրիգորյան, ԳՄԻ ռեկտոր, ԲՀԿ

Արտաշես Սարգսյան, ԲՀԿ, վերապահումով:

Ս.Նազարեթյան-Լեւոնի սկզբունքներից առաջինը կարելու է ապահովել մաքուր, արդար ընտրություններ:

Կարեն-Սկզբունքներ ունենանք, եթե ԳՀԽ-ն թեկնածուներ ունենալու է: հասկանանք լաեւ քանակը:

Արթուր Գեւորգյան-Հանկարծ Նախնորական բլոկ չդառնա ԳՀԽ-ն: Կարող է հանրությանը ներկայացնել թեկնածուներին: ԳՀԽ-ն չդառնա թայֆա:

Հրաչ Մելքոնյան-Ծախսեր կան, այդ հարցերն ինչպես է կարգավորվելու: Քննարկումները լավ կլինի, որ մինչեւ առաջադրումները լինեն:

16:55 Առաջիկա հեռուստաքննարկումների թեմաների առաջարկություններ. երեք հեռուստաքննարկում

### Արթուր Գեւորգյան

Մշակութային էքսպերիմենտալ կենտրոնից

ՈՒՂԵՐՁ ԳՅՈՒՄՐՈՒ ԶԼՄ-ՆԵՐԻՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ԱԿԸՆԿԱԼԻԶՈՎ

ՀՀ կառավարության Գյումրու արտագնա նիստից առաջ կատարված հայցախույզը կապված շրջանառվող նախարարություններից մեկ-երկուսը Գյումրի տեղափոխելու լուրերի հետ մտահոգությունների տեղիք է տալիս մշակույթի ոլորտի աշխատակիցների եւ կազմակերպիչների համար: Հնչած հարցին թե «որ նախարարության Գյումրի տեղափոխվել է առավել կարելու Ձեր կարծիքով» հարցին պատասխանները կիսվում էին քաղաքաշինության եւ մշակույթի նախարարությունների միջև: Անկախ ՄԵԿ ՀԿ պաշտոնական տեսակետներից շրջանառվող լուրերի վերաբերյալ՝ բազմակողմ հանդիպումների, քննարկումների եւ նախագծերի ընթացքում ՄԵԿ ՀԿ կողմից կատարվել են վերլուծություններ՝ կապված Գյումրու մշակութային քաղաքականության հետագա զարգացման, նախադրյալների, տիրապետվող միջոցների եւ հնարավորությունների վերաբերյալ:

Պատմամշակութային Գյումրու 1800 եւ մեր ժամանակների միջեւ կատարված համեմատակաները հետեւյալն են՝

1800-ականների Գյումրու բնակչության /32000 մարդ/ եւ յուրաքանչյուր 1066 բնակչին բաժին էր ընկնում 1 միավոր կրթամշակութային կամ համայնքային հաստատություն /կրթօջախ կամ համքարություն/ Գյումրիում կիրառելի էին տարածաշրջանային հարեւան, թուրքերի, պարսիկների, ռուսների, եզդիերեն եւ քրդերեն լեզուներ: Մասնակիորեն կիրառել էր ֆրանսերեն լեզուն: 2008թ. Գյումրիում չիրապարակված տվյալներով կա մոտ 1500000 բնակիչ եւ 14 ուսումնական հաստատություններ, 45 դպրոցներ 88 մշակութային կառույցներ եւ մոտ 60 տարբեր ակտիվությամբ գործող ՀԿ: 724 բնակչին-1 միավոր, ինչ մոտ 50% ով ավելի է: Կիրառելի են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, ռուսերեն լեզուները սակավ կիրառելի կամ տիրապետվող, տարածաշրջանային լեզուները: Չնայած սակավ տիրապետվող եւ կիրառելի լինելու կան անհրաժեշտ պայմանները նշված լեզուների ուսուցման համար: Դիտարկելով համեմատականը կարելի է ենթադրել որ պատմական աղբյուրներում Կովկասի երկրող մշակութային կենտրոն համարվող Գյումրին այսօր էլ ունի հնարավորություն այդիսին զարգանալու: Կարելի է համարել, որ պատմամշակութային Գյումրին բազմամշակութային, բազմալեզու տարածաշրջանային կենտրոն էր, ինչ այսօրվա համար ապահովում է մշակութային լուրջ զարգացումներ:

Տեղեկատվական միջոցների զարգացմանը զուգընթաց հանրային կարծիքի ձեւավորման հիմնական ծավալը բաժին է ընկնում ՉԼՄ-ներին, ինչ ենթադրում է լուսաբանման եւ ներկայացված հիմնախնդիրների պահանջվածություն եւ արդիականություն: Սակայն ՄԵԿ ՀԿ դիտարկումներով մշակութային ոլորտի հիմնախնդիրների եւ ձեռքներումների լուսաբանվածությունը կրում է մասնավոր բնույթ եւ երբեմն ներառելով ընդամենը մշակութային գործոն կամ մշակութային գործչի ներգրավվածություն հանրային խնդրում: Ինչից չի կարելի համոզված ասել ոչ պահանջված եւ ոչ արդիական լինելու մասին:

- Այդպիսի լուսաբանումները հիմնականում ունեն փաստարկման կամ իրազեկման տեսք:
- Մշակութային միջոցառումները լուսաբանվում են ՀՀ կառավարության տարբեր պատասխանատուների Գյումրի կատարած այցի տեսանկյունից: Օրինակ՝ 2007թ. նոյեմբերին Գյումրիում նշվեց Մարիամ Ասլամազյանի ծննդյան 100 ամյակը որին ներկա էր մշակույթի

փոխնախարարը: Լրատվամիջոցների ներկայացված նյութերում իրողությունը ներկայացված էր փոխնախարարի այցի շրջանակներում ևաեւ տարելիցին մասնակցելու տեսանկյունից:

- Մշակութային ոլորտի պատասխանատուների մասնակցությունը տարբեր հաղորդաշարերին դառնում է պահանջված երբ առաջ են գալիս սուր, նկատելի խնդիրներ, ինչ խոսում է մշակութային ոլորտի ընթացիկ, կարելու խնդիրներից հասարակության անտեղյակ մնալու մասին

- Մշակութային տոնակատարությունների եւ միջոցառումների ներկայացվածությունը ՉԼՄ-ներում հարաբերակցելով միջազգային արժեքների ներկայացվածության հետ, կարելի է փաստել, որ վերջիններս երկրորդական են համարվում: Օրինակ՝ ծխելու դեմ պայքարի օրվա /մայիսի 31 բոլոր ՉԼՄ լրատվական հատվածներ/ ներկայացվածության համեմատ, մշակութային օրվա /մայիսի 12 ոչ մի նյութ/ չներկայացվածությունը՝ փաստ է առանց խոսքերի:

- ՉԼՄ հեռարձակվող նյութերը չունեն մշակութային, տարիքային, սոցիալական հասցեականություն: Այս առումով ՄԷԿ 34 անհրաժեշտության դեպքում կարող է տրամադրել համապատասխան նյութեր:

- Մշակութային ոլորտի հիմնախնդիրների ներկայացման հիմնական ծավալը ընկնում է մշակութային ուղղվածության 34 -ներին, ինչ չի կարելի համարել բավարար, քանի որ վերջիններիս առաջարկները մշակութային այս կամ այլ խնդրի շուրջ քննարկումներ անկցացնելու վերաբերյալ միշտ չէ որ պսակվում են հաջողությամբ:

Առաջարկում ենք Գյումրու ՉԼՄ-ին հանրությանը ներկայացնել մշակութային քաղաքականության վերաբերյալ պաշտոնական դիրքորոշում, ինչ կնպաստի՝

- տարբեր խնդիրների շուրջ / ոչ միան մշակութային/ տեղական քաղաքականության ձեւավորմանը

- կոծանդակի պատմամշակութային Գյումրու երբեմնի համբավի վերականգնմանը:

Գիտակցելով մշակութային քաղաքականության ձեւակերպման դժվարությունները առաջարկում ենք Գյումրու ՉԼՄ հնարավորություններով կազմակերպել քննարկումների շարք, որը կնպաստի պաշտոնական դիրքորոշման ձեւակերպմանը:

**Լ.Բարսեղյան-Առաջիկա երեք հեռուստահաղորդումները եւ անցյալ 6 հեռուստաքննարկումները իրականացվում են «Մենք պլյուս» 34-ի միջոցով՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի 3այաստանի գրասենյակի դրամաշնորհային օժանդակությամբ:**

- Տեխնոպարկ, հեռանկարներ, լինել-չլինել, ինչպիսին է այն լինելու, որ իրական օգուտներ տա: Ջնարավոր հյուրեր եւ մասնակիցներ՝ Ս.Նազարեթյան, Ջոն Ասատրյան, Մարտին Տոնոյան, Երեւանի տեխնոպարկից, Ավետիք Եսայան,
- Գյումրու ավագանու գործունեության ԳՅԽ գնահատականի քննարկում, պարտականություններ,
- ՓՄՁ-ների գործունեության մասին լսենք իրենց, Սերգեյ Նազարեթյան,
- Ապակեթելերի եւ այլ աղբի հարցը, Կարեն Պետրոսյան,
- Գազի թանկացումը եւ դրա հետեւանքները Սուսաննա Էլբակյան,
- Հացի թանկացում, Սոնյա Սարգսյան,
- Սպառողների շահերի պաշտպանություն-Սուսաննա Էլբակյան
- Ավագանու առաջիկա թեկնածուների պատասխանատվության հարցը
- UNDP, ծրագիր ապակեթելերի մասին ծրագիր ունի, կարելի է դա էլ ուսումնասիրել, Ռ.Բաղդասարյան:
- Առաջարկություն, -արժե, որ Գյումրու հանրային խորհրդի գործունեության համար անդամավճար հավաքենք եւ հոգանք ընթացիկ ծախսեր, -Ռ.Բաղդասարյան:

Գյումրու հանրային խորհրդի գործունեության, նպատակների եւ խնդիրների մասին բոլոր առաջարկություններով, դիտողություններով եւ դատողություններով կարող եք դիմել խորհրդի աշխատանքների համակարգողներ:

- Սեյրան Մարտիրոսյանին (0312 36918, 33450, [star@shirak.am](mailto:star@shirak.am))
- Լեւոն Բարսեղյանին (0312 30622, 091 821 363, [levon@asparez.am](mailto:levon@asparez.am); [asparezclub@yahoo.com](mailto:asparezclub@yahoo.com))

#### Ծանոթություն.

Գյումրու հանրային խորհուրդը իրավաբանական անձ չէ: Այն բաղկացած է անհատ քաղաքացիներից, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, լրագրողներից, պետական եւ տեղական իշխանությունների ու կազմակերպությունների աշխատակիցներից, մշակույթի գործիչներից եւ այլն: Գյումրու հանրային խորհրդի աշխատանքային սկզբունքը բաց ֆորումն է: Գյումրու հանրային խորհուրդը նախաձեռնվել է 2005-2007 թվականների ընթացքում, այն իր առաջին պաշտոնական նիստը գումարել է 2007 թվականի օգոստոսի 11-ին: Գյումրու հանրային խորհրդի առաքելությունը Գյումրու զարգացման խթանումն է: Աշխատանքների համակարգողներն են «Խորան Արդ» 34 նախագահ Սեյրան Մարտիրոսյանը (հեռ. 0312 36918, [star@shirak.am](mailto:star@shirak.am)) եւ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ 34 խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը (հեռ. 0312 30622, [levon@asparez.am](mailto:levon@asparez.am)):